




ԳԵՐԱՇԵՈՐՀ Հ. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԾԵՄԾԵՄԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ

(1939-1996)

Ննջե՛ց...

Հ. Սահակ Ծայրագոյն Վարդապետ Ճեմճեմեան, Ընդհ. Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան, Շաբաթ 12 Հոկտեմբեր 1996 կէսօրուան ժամը 12.30ին ննջեց արդարներու երջանիկ հանդարտութեամբ, սպասելով Քրիստոսի ձայնին՝ յարութեամբ դուրս գալու համար իր հողակոյտէն եւ ապրելու յաւերժական երջանիկ կեանքը:

Այս հաւատքն է միակ մխիթարութիւնը, ամօքիչ բալասանը՝ Մխիթարեան միաբանակից հայրերու եւ հարազատներու անմխիթար սրտերուն:

Մխիթարեան միաբանութեան պատմութեան մէջ ամենասակաւակեաց Աբբահայրը եղաւ. 111 օր ամբողջ, ոչ աւելի:

Անողորք ախտը տիրացած էր եւ մաշեցուց զինք վերջին երկու ամիսներուն: Երկարատեւ հոգեվարք՝ ապրուած պայծառամիտ գիտակցութեամբ: Տկարութիւնը մարդկային է. քրիստոնէական արիութեամբ գիտցաւ ճակատաբաց, հերոսաբար սեւեռել մահը՝ անթարթ պահելով իր նայուածքը՝ Քրիստոսի լուսաճաճանչ դէմքէն: Նոյնիսկ երբ մօտը եղողները մարդկային արգահատանքով կամ եղբայրսիրութենէ մղուած հազարումէկ աճաբարութեամբ մխիթարական խօսք մը, ապրելու յոյսի նշոյլ մը կ'ուզէին արծարծել իր մէջ՝ եթէ երբեք առաջին պահու մը չլացած մնար, չուտով ինքզինք գտնելով կը քաջալերէր հոս մնացողներս՝ շարունակելու պայքարիլ գաղափարականներու համար՝ որոնց հաւատացած էր եւ մտադրած գործադրել իր ղեկավարութեան շրջանին, ազգին մշակութային եւ յատկապէս հոգեւոր օգուտին համար:

Իր կեանքն անցուցած էր միաբանութեան Դիւանը պրպտե-
լով պատմական դրուագներ վերակազմելու, մոռացութեան
յանձնուած լուսաւոր դէմքեր վերակենդանացնելու՝ հիմնուած
նամակներու, տեղեկագիրներու եւ այլ վաւերացողութիւն
վրայ. մէկ առ մէկ ձեռքէ անցուցած էր դարերու խորքէն մեզի
հասած հազարաւոր ձեռագիրներ եւ սնած էր անոնցմով, ոչ
միայն գիտնականի եւ ուսումնասէրի աչքով դիտելով, այլ
հոգեւորականի մը երկիւղածութեամբ ու եռանդով ըմբոշխնե-
լով եւ հրամցնելով իր չորս կողմիններուն:

Բանասիրական, դիւանային ու պատմական աշխատասի-
րութիւններէն դուրս երկար տարիներ վարած էր Մխիթարեան
ապագայ միաբաններու դաստիարակութեան պատասխանատու
եւ ծանր պաշտօնը: Հոգեւոր սնունդի կարօտ անձերու, հոգե-
ւորականներու եւ հաւատացեալներու բազմութեան կարիքը
գոհացնելու նպատակով վերջին տարիներուն կ'աշխատէր յատ-
կապէս հոգեշունչ գիրքեր հրատարակելու:

Հաւատացած էր Մխիթարի հետեւորդներու առաքելութեան՝
ազգին մէջ հոգեւոր արժէքներու բարձրացումին եւ ապրումին,
եւ իր կեանքը գոհած այս նպատակով, հիմա, հիւանդութեան
անկողինին մէջ, Աստուծոյ կը նուիրէր իր տառապանքները
խնդրելով որ նորանոր կոչումներ՝ հաւատակիցներ, գաղափա-
րակիցներ յարուցանէր, որպէսզի գոյատեւէր իր այնքան սիրած
միաբանութիւնը՝ որու հայրն էր հիմա:

Զօրացած Սուրբ Խորհուրդով, խաղաղ աւանդեց իր հոգին:
Եկեղեցական, քաղաքական եւ մշակութային ներկայացուցիչ-
ներու ցաւակցական անհամար գիրքեր կը վկայեն այս համեստ
վանականին տիտանային անխոնջ աշխատանքին եւ կեանքի
վկայութեան ունեցած մեծ դերը հայ իրականութենէն ներս:

Եղբայրակիցներս կարօտով կը վերակենդանացնենք իր յի-
շատակը մեր սրտերուն մէջ որովհետեւ Հոգեշնորհ Հ. Սահակ
Վարդապետ իր օրինակով հանդիսացաւ Մխիթարի գաղափարա-
կանը ներկայ դարուս մէջ մարմնաւորող անձ, ինչպէս իրենց
ժամանակ կատարած էին Զամբեաններ, Աւգերեաններ ու Ալի-
շաններ որոնց արժանաւոր հետեւորդը եւ ժառանգորդը եղաւ:

Անգութ ժամանակը պատկառանքով կ'ընկրկի պատմու-
թեան հսկաներուն դիմաց, եւ ապահովաբար մոռացութիւնը
պիտի չսքօղէ եւ ոչ իսկ պահ մը պիտի չնսեմացնէ Հոգեշնորհ
Հ. Սահակ Վրդ. Ճեմճեմեան Աբբազօր յիշատակը:

Հ. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՃԵՄՃԵՄԵԱՆ

Միխիթարեան Միաբանութեան Ընդհ. Արքահօր
Գրական Հունձքը

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՀԱՏՈՐՆԵՐ

- 1.- Մարսիլիոյ հայ տպարանը (300 ամեակի առիթով) 1685-1985, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1986, էջ 65:
- 2.- Ճանչնալ Քրիստոս աղօթքի հոգիով, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1992, էջ 136:
- 3.- Մայր Ցուցակ Հայերէն Զեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց, հտ. Դ., *Վենետիկ, Ս. Ղազար*, 1993, էջ 638:
- 4.- Քրիստոսի սիրոյն Հուրը, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1994, էջ 523:
- 5.- Աւետարանական Երանութիւնները, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1995, էջ 211:
- 6.- Մայր Ցուցակ Հայերէն Զեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց, հտ. Ե., *Վենետիկ, Ս. Ղազար*, 1995, էջ 638:
- 7.- Աւետարանական Իմաստութիւն, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1996, էջ 246:
- 8.- Աւետարանը ապրուած կեանքով, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1996, էջ 170:
- 9.- Մայր Ցուցակ Հայերէն Զեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց, հտ. Զ., *Վենետիկ, Ս. Ղազար*, 1996, էջ 672:
- 10.- Մայր Ցուցակ Հայերէն Զեռագրաց Մատենադարանին Միխիթարեանց, հտ. Է., (*յետ մահու*), *Վենետիկ, Ս. Ղազար*, 1996, էջ 590:

ԲԱԶՄԱՎԷՊԻ ՄԱՏԵՆԱՇԱՐ

- 11.- Հ. Ներսէս Սարգիսեանի ուղեւորութիւնը դէպի Փոքր եւ Մեծ Հայք (1843-1853), *Վենետիկ, Ս. Ղազար*, 1975, էջ 94:

- 12.- Արրահամ Երեւանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, (*Յառաջաբան, Բնագիր, Խմբագիր օրինակ եւ Ծանոթութիւններ*) պատրաստեց Հ. Սահակ ձեմեմեման, *Վենետիկ Ս. Ղազար*, 1977, էջ 182:
- 13.- Հ. Դեւոնդ Ալիշան՝ Տեսուչ Փարիզի Մուրատեան Վարժարանի, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1980, էջ 352:
- 14.- Հայ քարտիսագրութեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ ԺԸ. դարուն, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1981, էջ 59 (14 տախտակներ աշխարհագրական քարտէսներու):
- 15.- Հ. Միֆայէլ Զամչեան եւ իր Հայոց Պատմութիւնը, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1983, էջ 69:
- 16.- Գեորգ Դպիր Տէր Յովհաննիսեան (Պալատեցի) եւ Միքարեանները, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1984, էջ 144:
- 17.- Նոր միւթեր Սարգիս Արփեպս. Սարափեանի մասին, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1985, էջ 90:
- 18.- Յովհաննէս Պատկերաւան, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1987, էջ 57:
- 19.- Յովհաննէս Պատկերաւան, Նամականի (1695-1758), *աշխատասիրեց Հ. Սահակ ձեմեմեման, Վենետիկ, Ս. Ղազար*, 1988, էջ 285:
- 20.- Կարապետ Նպս. Ամատունի, ԺԷ. դարու երեւելի վարդապետներ, (հր. Հ. Ս. Զ.), *Վենետիկ, Ս. Ղազար*, 1989, էջ 100:
- 21.- Հայ տպագրութիւնը եւ Հոռմ (ԺԷ. դար), *Վենետիկ, Ս. Ղազար*, 1989, էջ 204:
- 22.- Կարապետ Նպս. Ամատունի, Մովսէս Գ. Տաթեւացի Կաթողիկոս էջմիածնի, *Վենետիկ, Ս. Ղազար*, 1992, էջ 100:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

«Հայ Ընտանիք»

- 24.- Միքիթար Արրահայր եւ Ս. Ղազարի շինութիւնը, *ԼԵ (1982), Թիւ 3-4*, էջ 12:

«Հանդէս Ամսօրեայ»

- 25.- Միքիթար Արրահօր դիմանկարները, *ՀԱ*, 1978, *սիւն 89-106*:
- 26.- Թրիեստի Միքիթարեան Տպարանը, *ՀԱ*, 1981, էջ 75-110:

«Բազմավեպ»

- 27.- Գրախօսական. «Ցուցակ Հայերեն Ձեռագրաց Մխիթարեանց Մատենադարանի ի Վիեննա», հտ. Բ, *Վիեննա*, 1963: Բազմ., 1966, էջ 155-56:
- 28.- Կրկնագիր արծաթապատ Մաշտոց մը, Բազմ., 1966, էջ 172-74:
- 29.- Ոսկանի Մաշտոցը, Բազմ., 1966, էջ 284-91:
- 30.- Մկրտուքեան խորհուրդի բանաձևը, Բազմ., 1967, էջ 135-42:
- 31.- Երախաներու օծումը Հայ Եկեղեցւոյ մէջ, Բազմ., 1968, էջ 21-9:
- 32.- Նորագիւտ պարականոն շարականներ, Բազմ., 1968, էջ 211-32:
- 33.- Յովհաննէս Մշեցի, Բազմ., 1969, էջ 26-32:
- 34.- Պսակի խորհուրդը ձեռագիր Մաշտոցներու լոյսին տակ, Բազմ., 1969, էջ 116-23:
- 35.- Ձեռագիր Շարակնոցները եւ անոց կանոնները, Բազմ., 1969, էջ 193-209, 305-312. Բազմ., 1970, էջ 23-31:
- 36.- Ճաշոցի Բառասնորդաց ընթերցումները, Բազմ., 1970, էջ 94-107:
- 37.- Ալիշանի «Սիսուան»ը, Բազմ., 1970, էջ 323-35:
- 38.- Գրախօսական. «Ղեւոնդ Ալիշան, Նամակներ», հրտ. Սուրեն Շտիկեան, ՀՍՍՀ ԳԱ, *Երեւան*, 1969, Բազմ., 1970, էջ 381-84:
- 39.- Գրախօսական. «Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառու վանքի մատենադարանին, հտ. Բ. «Անտոնեան հաւաքածոյ», *Վիեննա, Մխիթարեան տպ.*, 1971, էջ 331:
- 40.- Մկրտուքեան արարողութիւնը Մաշտոցներու մէջ, Բազմ., 1971, *Թիւ* 1-2, էջ 25-35. Բազմ., 1972, *Թիւ* 2-3, էջ 183-231, *Թիւ* 4, էջ 381-419:
- 41.- Ալիշանի դէպի Նւրպա մամբորդութիւնը, Բազմ., 1971, *Թիւ* 3-4, էջ 226-67:
- 42.- Գրախօսական. «Ներսէս Լամբրոնացի», հեղ. Գրիգոր Յակոբեան, ՀՍՍՀ ԳԱ, *Երեւան*, 1971. Բազմ., 1972, *Թիւ* 1, էջ 154-56:
- 43.- Հ. Ղուկաս Սեբաստացի, (1709-1752), հեղինակ Դաւիթ Բէկի պատմութեան, Բազմ., 1972, *Թիւ* 4, էջ 491-501:
- 44.- Հ. Ներսէս Սարգիսեանի ուղեւորութիւնը դէպի Փոքր եւ Մեծ Հայք, Բազմ., 1973, *Թիւ* 1, էջ 87-106, *Թիւ* 2, էջ 184-212. Բազմ., 1974, *Թիւ* 1-2, էջ 144-168:

- 45.- Շնորհալիի շարականներու հարազատութեան հարցը ձեռագիրներու լոյսին տակ, Բազմ., 1973, *թիւ* 3-4, էջ 362-93. Բազմ., 1974, *թիւ* 1-2, էջ 86-105:
- 46.- Արքահամ Երեւանցիի «Պատմութիւն Պատերազմացն 1721-1736 թուի» բնագրի հարցը, (*Ուսումնասիրութիւն եւ բնագիր*), Բազմ., 1974, *թիւ* 3-4, էջ 278-305. Բազմ., 1975, *թիւ* 1-2, էջ 107-31, *թիւ* 3-4, էջ 284-98:
- 47.- Հ. Ղեւոնդ Ալիշան, Տեսուչ Փարիզի Մուրատեան Վարժարանի, Բազմ. 1976, *թիւ* 3-4, էջ 316-40. Բազմ. 1978, *թիւ* 3-4, էջ 381-410. Բազմ. 1979, *թիւ* 1-4, էջ 309-36:
- 48.- Մխիթար Արքաօր հրատարակչական առաջնութեան գոհարները, Բազմ. 1977, *թիւ* 1-2, էջ 37-96, *թիւ* 3-4, էջ 437-81. Բազմ. 1979, *թիւ* 1-4, էջ 5-182:
- 49.- Տպագրիչ Պօղոս Արապեան եւ Հերակլ Բ Վրաց թագաւորը, (*Ուսումնասիրութիւն եւ նամակներ*), Բազմ. 1978, *թիւ* 1-2, էջ 67-98. Բազմ. 1981, *թիւ* 1-2, էջ 73-94. Բազմ. 1982, *թիւ* 1-2, էջ 26-52:
- 50.- Գրախօսական. «Ալիշան», Հեղ. Սաֆոյ Սարգսեան, *Երեւան*, 1978, Բազմ. 1978, *թիւ* 1-2, էջ 213-16:
- 51.- Նոր նիւթեր Կ. Պօլսոյ երջանկայիշատակ Յովհաննէս Կոլոտի մասին, Բազմ. 1978, *թիւ* 3-4, էջ 255-83:
- 52.- Հրտ. Կարապետ Կթդս.ի Ուլնեցոյ, վարժ ինքնագիր, Բազմ. 1978, *թիւ* 3-4, էջ 286-95:
- 53.- Նոր նիւթեր երջանկայիշատակ Արքահամ Արծիւեան Կաթողիկոս-Պատրիարքի մասին, Բազմ. 1979, *թիւ* 1-4, էջ 264-81:
- 54.- Ժէ-ԺԸ դարու հայկական փարտէսներու արձագանքը Ս. Ղազարու դիւանէն ներս, Բազմ. 1980, *թիւ* 1-4, էջ 76-123:
- 55.- Հ. Միքայէլ Զամչեան եւ իր «Հայոց Պատմութիւն»ը, Բազմ. 1981, *թիւ* 3-4, էջ 300-56:
- 56.- Ս. Բեմեղիկոսու եւ Հայերը, Բազմ. 1981, *թիւ* 3-4, էջ 399-411:
- 57.- Գեորգ Դպիր Պալատեցի եւ Մխիթարեանները, Բազմ. 1982, *թիւ* 1-2, էջ 96-155, *թիւ* 3-4, էջ 294-319. Բազմ. 1983, *թիւ* 1-4, էջ 11-38:
- 58.- Նոր նիւթեր Սարգիս Արքեպ. Սարափեանի մասին, Բազմ. 1983, *թիւ* 1-4, էջ 132-74. Բազմ. 1984, *թիւ* 1-2, էջ 118-41:
- 59.- Մարտիրոս Հայկական Տպարանը, Բազմ. 1985, *թիւ* 3-4, էջ 187-237:
- 60.- Գրախօսական «Հայերէն ձեռագրերի Ժէ դարի յիշատակարաններ (1641-1660)», հոր. Գ, Բազմ. 1985, էջ 345-47:

- 61.- Յովհաննէս Պատկերահան (1695-1738), Բազմ. 1986, *ԹԻԼ* 1-4, էջ 268:
- 62.- Հայ տպագրութիւնը եւ Հռոմ (ԺԷ դար), Բազմ. 1987, *ԹԻԼ* 1-4, էջ 78. Բազմ. 1988, *ԹԻԼ* 1-4, էջ 64. Բազմ. 1989, *ԹԻԼ* 1-4, էջ 91:
- 63.- Յովհաննէս Պատրիարք Կոլոտի նորայայտ նամակները, Բազմ. 1988, *ԹԻԼ* 1-4, էջ 175:
- 64.- Ս. Ղազարի տպարանին ծնունդը (1789-1989), Բազմ. 1989, *ԹԻԼ* 1-4, էջ 7:
- 65.- Ոսկան վրդ. Երեսանցիի նորայայտ նամակները, Բազմ. 1989, *ԹԻԼ* 1-4, էջ 178:
- 66.- «Հայոց Վարժարան»ը եւ Նախիջեւանի թեմը, Բազմ. 1990, *ԹԻԼ* 1-2, էջ 40:
- 67.- Ս. Ղազարի տպարանին ծնունդը (1789-1989), Բազմ. 1990, թիւ 3-4, էջ 259:
- 68.- Ֆրա Օգոստինոս Եպս. Բաջենցի գործունէութիւնը, Բազմ. 1990, թիւ 3-4, էջ 330:
- 69.- Մովսէս Խորենացիի Պատմութեան Վեցերորդական տպագրութիւնը, Բազմ. 1991, *ԹԻԼ* 1-2, էջ 26:
- 70.- Ֆրա Պօղոս Պիրումալիի գործունէութիւնը, Բազմ. 1991, *ԹԻԼ* 1-2, էջ 64:
- 71.- Մեսրոպ Արքեպս. Սմբատեանի նամակները առ Հ. Ղեւոնդ Ալիշան, Բազմ. 1991, *ԹԻԼ* 1-2, էջ 126:
- 72.- Ֆրա Թումաս Վիտալիի եւ ֆրա Յովհաննէս Դոմինիկոս Նազարեանի գործունէութիւնը, Բազմ. 1991, *ԹԻԼ* 3-4, էջ 357:
- 73.- Էջմիածնի եպիսկոպոսներու նամակներ առ Հ. Ղեւոնդ Ալիշան, Բազմ. 1991, *ԹԻԼ* 3-4, էջ 372:
- 74.- Պօղոս Պիրումալի, Արքեպիսկոպոս Նախիջեւանի, Բազմ. 1992, *ԹԻԼ* 1-4, էջ 44:
- 75.- Յովհաննէս Բիշ. Մկրտեանի նամակները առ Հ. Ղեւոնդ Ալիշան, Բազմ. 1992, *ԹԻԼ* 1-4, էջ 63:
- 76.- Հ. Միքայէլ Զաւէեանի «Պատմութիւն Հայոց»ի արձագանգը, Բազմ. 1992, *ԹԻԼ* 1-4, էջ 147:
- 77.- Ֆրա Յովհաննէս Դոմինիկոս Նազարեան, Բազմ. 1993, *ԹԻԼ* 1-4, էջ 50:
- 78.- «Բազմավէպ»ին ծնունդը, Բազմ. 1994, *ԹԻԼ* 1-4, էջ 49:
- 79.- Ֆրա Յակոբ Յիսուսի եւ Մաթէոս Արքեպս. Աւանդեան, Բազմ. 1995, *ԹԻԼ* 1-4, էջ 165:
- 80.- Հանգիստ Հ. Միքայէլ վրդ. Յովհաննէսեանի (1912-1994), Բազմ. 1995, *ԹԻԼ* 1-4, էջ 460:
- 81.- S. Benedetto e la Chiesa Armena, (*estratto*), 1981, p. 257-271:

ԼՈՒՍԱՏԻՊ ՀԱՏՈՐՆԵՐ

- 82.- Վարֆ Բիւրէ ՏՄԱՐսի, 1970, էջ 93:
- 83.- Միֆելէ Մակոնէ, 1977, էջ 60:
- 84.- Իմ հոգեւոր Գիրքս, (2 հատոր), 1980, էջ 223, էջ 99:
- 85.- Վանականին Կենցաղավարութեան գիրքը, 1981, էջ 28:
- 86.- Ֆաթիմայի Տիրամայրը, 1982, էջ 20:
- 87.- Ուխտաւորի մը պատմութեան, 1990, էջ 102:
- 88.- Ս. Սեբորէ Սարովի Վանֆի Միանձնը, 1990, էջ 153:
- 89.- Յիսուսի Մննդեան Խորհուրդը (Ս. Նփրեմ), 1991, էջ 22:
- 90.- Երեկոյեան Մտածութիւններ, 1992, էջ 201:
- 91.- Նորընծային Հոգեւոր Գիրքը, 1992, էջ 418:
- 92.- Վարֆ Սրբուհի Ճեմմա Կալկանիի, 1992, էջ 316:
- 93.- Սրբութիւնը ամէնուն համար, 1993, էջ 263:
- 94.- Յիսուսի Մննդեան Աստղին Խորհուրդը, 1992, էջ 12:
- 95.- Նորընծային Աղօթագիրքը, 1993, էջ 33:
- 96.- Քաղուած Սաղմոսարան, 1994, էջ 32:

ԱՆՏԻՊ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ունի քարոզներ, խրատներ, հոգեւոր խորհրդածութիւններ եւ քրիստոնէական վարդապետութեան զանազան մասերու բացատրութիւններ, ինչպէս նաեւ կրօնաւորական կեանքի շուրջ գրութիւններ: Բազմաթիւ հոգեւոր կրթութիւններու առիթով պատրաստած քարոզներ ալ ունի:

Սակայն անտիպ մնացած կոթողային աշխատանքներ կը մնան «Միսիքար Դաստիարակ» հատորը եւ «Յուցակ Զեռագրաց»ի Ը. հատորը:

ՑԱԽԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

14 Հոկտեմբեր, 1996

Հայր Սերոբ Զամուրլեան
Մխիթարեան Միաբանութեան Ընդհանուր Փարտուղար
Վեներաբլիկ

Խոր վշտով զալիս ենք մեր սրտազգաց ցաւակցութիւնները բերելու Մխիթարեան Միաբանութեան Ընդհանուր Աբբա՛հայր եւ Առաջնորդ՝ Հ. Սահակ Վարդապետ Ծեմճեմեանի կարճատեւ եւ անողոք հիւանդութեան պատճառով, անսպասելի մահուան առթիւ, Մխիթարեան Միաբանութեան:

Թող Բարին Աստուած հանգուցեալ իր ծառայի արդար հոգին սիրով ընդունի երկնքի արքայութեան լուսեղէն յարկերի մէջ եւ անսպառ մխիթարութիւն եւ ոյժ պարգեւի Մխիթարեան Միաբանութեան ողջ անդամներին:

Հ. Սահակ Վարդապետ Ծեմճեմեան իր նուիրեալ եւ մաքուր կեանքով եւ իր գրական բեղուն աշխատանքով, իբրեւ պայծառ մի աստղ հայ ժողովրդի հոգեւոր եւ գրական կեանքի երկնակամարում պիտի մնայ առ յաւէտ:

Սոյն թուականի Հոկտեմբերի 20ին, Կիրակի օր, յետ սուրբ եւ անմահ Պատարագի արարողութեան Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հոգեհանգստեան յատուկ պաշտօն պիտի կատարուի մեր նախագահութեամբ հանգուցեալ Աբբահօր հոգւոյ խաղաղութեան համար:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: Ամէն:

Գարեգին Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

13 Հոկտեմբեր, 1996

Գերապատիւ Հ. Սերոբ Զամուրիբան
 Ընդհանուր Քարտուղար
 Միխիթարեան Միաբանութեան
 Ս. Ղազար, Վեմնտիկ

Որոք ցաւով իմացանք Միխիթարեան Միաբանութեան Ընդհանրական Աբբահայր Սահակ Վրդ. Ճեմճեմեանի վախճանումը: Մօտէն ճանչնալով հանգուցեալը եւ իր բանասիրական վաստակն ու հովուական ծառայութիւնը, կրնանք անվարան հաստատել, որ ան մեր ժամանակներու ամէնէն աչքառու ու վաստակաշատ հոգեւորականներէն մին եղած է: Աստուծոյ, հայ ժողովուրդին ու հայ մշակոյթի ծառայութիւնը իր կեանքին ճշմարիտ ճամբան եղած է ու այդ ճամբէն տարիներ շարունակ քալած է ան բարձրագոյն աստիճանի հաւատքով, կամքով ու նուիրումով:

Կը բաժնենք Միխիթարեան Միաբանութեան խոր ցաւն ու սուգը: Կ'աղօթենք որ Աստուած հանգուցեալի հոգին արժանի դարձնէ իր երկնային թագաւորութեան: Կ'աղօթենք որ Աստուած իր հայրական հոգածութեան տակ միշտ պահէ մեր սիրելի Միխիթարեան Միաբանութիւնը իր հոգեւոր ու մշակութային առաքելութեան ճամբուն վրայ:

Միւրոյ ջերմ ողջունիւ,
Աղօթարար՝

Արամ Ա.

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ

13 Հոկտեմբեր, 1996

Գերապատիւ Հայր Յովսէփ Պեքեմեմիւսեան

Աթոռակալ Մխիթարեան

Միաբանութեան ի վեմետիկ

Խոր կսկիծով իմացանք կանխահաս մահը Գերապայծառ Սահակ Վրդ. Ծեմճեմեանի, նորընտիր Աբբահայր Մխիթարեան Միաբանութեան ի վեմետիկ: Ողջունած էինք իր ընտրութիւնը որպէս նոր արշալոյս երկդարեան միաբանութեան վերականգնումին եւ վերելքին, շնորհիւ իր կրօնաւորական կեանքի ապրումին, իր խոնարհ եւ հեղաբարոյ նկարագրին եւ իր արտակարգ մտային զարգացումին: Իր անձին մէջ կը մարմնաւորէր անմահ Մխիթարի վսեմ գաղափարականը: Համակերպելով Աստուծոյ կամքին, կ'աղօթէնք որ Քրիստոս ընդունի իր հաւատարիմ ծառան արդարներու դասին մէջ:

Հայ Կաթողիկէ նուիրապետութեան եպիսկոպոսներու, քահանաներու եւ հաւատացեալներու անունով, խորին մեր ցաւակցութիւնները կը յայտնենք խնդրելով Բարձրեալէն որ համակէճեր սրտերը երկնառաս իր մխիթարութիւններով:

Յովհաննէս Պետրոս ԺԸ.

Կաթողիկոս Պատրիարք Տանն Կիլիկիոյ

12 Հոկտեմբերի 1996թ.

Սուրբ Ղազարի

Մխիթարեան Միաբանութեան

Սուրբ Հայրերին

Խորին կսկիծով իմացայ Սուրբ Ղազարի Մխիթարեան Միաբանութեան Աբբահայր Հայր Սահակ Ծեմճեմեանի անժամանակ մահուան լուրը:

Մեծ յարգանք տածելով հանգուցեալի հոգեւոր գործունէութեան եւ հայագիտական խոշոր վաստակի նկատմամբ՝ անկեղծ ցաւակցութիւն եմ յայտնում նրա հարազատներին, գործընկերներին, հոգեւոր եղբայրներին:

Լեւոն Տէր-Պետրոսեան

Երեւան

Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

14 Հոկտեմբերի 1996 թ.

Մխիթարեան Միաբանութեան
Սուրբ Ղազար Կղզի

Իմ խորին ցաւակցութիւններն եմ յայտնում Մխիթարեան Միաբանութեան Աբբա՛հայր Սահակ Վրդ. Ծեմճեմեանի անժա-մանակ մահուան կապակցութեամբ:

Սահակ Վրդ. Ծեմճեմեանի ազգանուէր գործունէութիւնը, Միաբանութեան բարգաւաճման գործում նրա ներդրած աւանդը, մեծ նուիրուածութիւնը ուսումնագիտական եւ հայագիտական աշխատանքներին վառ օրինակ կը ծառայեն դալիք սերունդ-ների համար եւ, համոզուած եմ, կը յիշուեն դարէ՛ դար:

Արմէն Սարգսեան
Սուրբ Աթոռում Հայաստանի
Հանրապետութեան Դեսպան

Վիեննա, 13 Հոկտեմբեր 1996

Գերապատիւ

Հ. Յովսէփ Վրդ. Պեհեսմիլեան

Աթոռակալ Մխիթարեան Միաբանութեան

Վեմետիկ

Մեծարգոյ եւ սիրելի Հայր,

Սրտի մեծ կսկիծով լսեցինք Գերապ. Աբբահայր Հ. Սահակ Վրդ. Ծեմճեմեանի մահուան տխուր լուրը: Այս մեծ կորուստին առջեւ իսկապէս ցնցուած եւ խոր սուգով համակուած ենք մենք, բոլոր միաբաններս Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան:

Մենք ճանչցանք լուսահոգի Աբբահայրը զանազան այցե-լութիւններու ընթացքին իբրեւ անբասիր կրօնաւոր մը, բացա-ռիկ վաստակներով եւ կարողութիւններով օժտուած Մխիթարի հարազատ որդին, անխոնջ մշակ մը երիտասարդ սերունդին եւ ամէնէն աւելի համեստ, առաքինի, ժպտադէմ ու քաղցրաբան եղբայրակից մը...: Կը խոնարհինք երախտագէտ սրտով իր խնկելի յիշատակին եւ անհամար վաստակներուն առջեւ:

Մինչ մեր սրտագին ցաւակցութիւնը կը յայտնենք Ձեզի, մեծարգոյ Աթոռակալ Հայր եւ բոլոր միաբանակից Հայրերուն, Ձեր աղօթքներուն կը միանանք մեր իւրաքանչիւրին մատուցած Ս. Պատարագներով:

Մեր Գերպ. Աբբազօր՝ Հ. Պողոս Վրդ. Գոճանեանի բացակայութեան, նուիրական պարտականութիւն կը համարիմ իբրեւ ներկայացուցիչ մեր Միաբանութեան զալ Ս. Ղազար ու մասնակցիլ Հոգեհանգիստի եւ յուղարկաւորութեան արարողութիւններուն: Թող Ամենակալ Տէրը արժանացնէ իր, հաւատարիմ ծառան յաւիտեանական ուրախութեան եւ երանաւէտ տեսութեան:

Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի:

Միշտ ջերմ սիրով ու յարգանքով՝

Մնամ աղօթարար,

Հ. Սիմոն Վրդ. Պայեան
Ընդհ. Քարտուղար եւ Առաջակալ

14 Հոկտեմբերի 1996թ.

Վեմետիկ, Սուրբ Ղազար
Միսիթարեան Միաբանութեանը

Խոր կսկիծով ստացանք աբբազայր Սահակ Ճեմճեմեանի մահուան բօթը: Միսիթարեան միաբանութիւնը, մենք բոլորս, կորցրինք նուիրեալ հոգեւորականին եւ բազմաբեղուն գիտնականին: Մաշտոցի անուան Մատենադարանի ողջ անձնակազմը խորապէս վշտակցում է Միսիթարեան եղբայրներին: Աւա՛ղ, իր ոյժերի ծաղկման չըջանում հանգեաւ ի Տէր մեր պզնուագոյն գործընկերը:

Բազմավաստակ հայազէտ, սիրելի Սահակ Վարդապետ Ճեմճեմեանի պայծառ կերպարը միշտ վառ կը մնայ մեր սրտերում:

Մաշտոցեան Մատենադարանի տնօրէն, ակադեմիկոս
Սէն Արեւշատեան